Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
հունվարի 19-ի N 51 -Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐ ՎԱՐՈՂԻՆ ՏՐԱ-
ՄԱԴՐՎՈՂ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

1. Ի լրումն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով սահմանված տեղեկությունների՝ հարկային մարմնի կողմից մասնակիցների ռեեստր վարողին տրամադրվում են հետևյալ տեղեկությունները՝

1) մասնակցի սեռը.

2) ծննդյան օրը, ամսաթիվը, տարեթիվը.

3) մահվան դեպքում՝ մահվան օրը, ամսաթիվը, տարեթիվը.

4) կոնտակտային տվյալները, այդ թվում՝

ա. բնակության վայրի հասցեն (բնակության, հաշվառման, օտարերկրյա, այլ),

բ. քաղաքային կամ բջջային հեռախոսահամարը (առկայության դեպքում),

գ. էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում):

2. Հարկային մարմնի կողմից մասնակիցների ռեեստր վարողին տեղեկությունները ներկայացվում են դրանց ստացման օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում բացառապես էլեկտրոնային տարբերակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ